

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
NATIONAL ACADEMY OF SCIENCES OF THE REPUBLIC OF ARMENIA

ԼՐԱԲԵՐ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ВЕСТНИК
ОБЩЕСТВЕННЫХ
НАУК

HERALD
OF SOCIAL SCIENCES

1(655)
ՀՈՒՆՎԱՐ-ԱՊՐԻԼ
ЯНВАРЬ-АПРЕЛЬ
JANUARY-APRIL

ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն/Изд. «Гитутюн» НАН РА/“Gitutyun” Press NAS RA
ԵՐԵՎԱՆ/ԵՐԵՎԱՆ/ԿԵՐԵՎԱՆ 2019

ՔԱՌԱՄՍՅԱ ՀԱՆԴԵՍ, ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1940 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻՑ
ЖУРНАЛ ВЫХОДИТ 3 РАЗА В ГОД, ИЗДАЕТСЯ С НОЯБРЯ 1940 ГОДА
JOURNAL IS PUBLISHED 3 TIMES IN A YEAR, SINCE NOVEMBER 1940

Գլխավոր խմբագիր՝ **ՊԱՎԵԼ ԱՎԵՏԻՍՅԱՆ**
Խմբագրի տեղակալ՝ **ԱՐՄԵՆ ԲՈԲՈԽՅԱՆ**
Պատասխանատու քարտուղար՝ **ԳԱՅԱՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

Խմբագրական խորհուրդ

ԱՐԱՐԱՏ ԱՂԱՍՅԱՆ, ԱՐԾՐՈՒՆ ԱՎԱԳՅԱՆ, ՀԱՄԼԵՏ ԳԵՎՈՐԳՅԱՆ, ՎԱՐԴԱՆ
ԴԵՎՐԻԿՅԱՆ, ԱԼԲԵՐՏ ԽԱՌԱՏՅԱՆ, ՎԻԿՏՈՐ ԿԱՏՎԱԼՅԱՆ, ՌՈՒԲԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ,
ՎԼԱԴԻՄԻՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, ՎԱԶԵ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ, ՆԻԿՈԼԱՅ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ,
ԳՎԳԻԿ ՂԱԶԻՆՅԱՆ, ԱՇՈՏ ՄԵԼՔՈՆՅԱՆ, ԳԵՎՈՐԳ ՊՈՂՈՍՅԱՆ, ՌՈՒԲԵՆ ՍԱՖՐԱՍՏՅԱՆ,
ՅՈՒՐԻ ՍՈՒՎԱՐՅԱՆ

Главный редактор – **ПАВЕЛ АВЕТИСЯН**
Заместитель редактора – **АРСЕН БОБОХЯН**
Ответственный секретарь – **ГАЯНЭ АРУТЮНЯН**

Редакционная коллегия

ԱՐՇՐԱՆ ԱՎԱԿՅԱՆ, ԱՐԱՐԱՏ ԱԳԱՅԱՆ, ՎԼԱԴԻՄԻՐ ԱՐՄԻՆԻԱՆ, ԳԱՄԼԵՏ ԳԵՎՈՐԿՅԱՆ, ՎԱՐԴԱՆ
ԴԵՎՐԻԿՅԱՆ, ԳԱԳԻԿ ԿԱԶԻՆԻԱՆ, ՐԱՄԵՆ ԿԱՐԱՊԵՏԻԱՆ, ՎԻԿՏՈՐ ԿԱՏՎԱԼԻԱՆ, ԱՇՈՏ
ՄԵԼԿՈՆԻԱՆ, ՎԱՇԵ ՕՎԱԿԻՄԻԱՆ, ՆԻԿՈԼԱՅ ՕԳԱՆԵՏԻԱՆ, ԳԵՎՈՐԿ ՍՈՎՈՍԿԻԱՆ,
ՐԱՄԵՆ ՍԱՖՐԱՏԻԱՆ, ՅՈՒՐԻ ՍՎԱՐԻԱՆ, ԱԼԲԵՐՏ ԽԱՐԱՏԻԱՆ

Editor-in-chief **PAVEL AVETISYAN**
Vice-editor **ARSEN BOBOKHYAN**
Responsible secretary **GAYANE HARUTIUNYAN**

Editorial Board

ARARAT AGHASYAN, ARTSRUN AVAGYAN, HAMLET GEVORGYAN, VARDAN DEVRIKYAN, ALBERT
KHARATYAN, VIKTOR KATVALYAN, RUBEN KARAPETYAN, VLADIMIR HARUTIUNYAN, VACHE
HOVAKIMYAN, NIKOLAY HOVHANNISYAN, GAGIK GHAZINYAN, ASHOT MELKONYAN, GEVORG
POGHOSYAN, RUBEN SAFRASTYAN, YURI SUVARYAN

© Լրարբեր հասարակական գիտությունների
© Вестник общественных наук
© Herald of Social Sciences

Հայերեն բաժնի խմբագիրներ՝ **Մելանիա Միքայելյան**
Սեդա Քուփելյան
Ռուսերեն բաժնի խմբագիր՝ **Գայանե Հարությունյան**

Редакторы армянского отдела – **Меланья Микаелян**
Седа Купелян
Редактор русского отдела – **Гаянэ Арутюнян**

Editors of Armenian part **Melania Mikaelyan**
Seda Kupelyan
Editor of Russian part **Gayane Harutyunyan**

Համակարգչային ձևավորումը և էջադրումը՝ **Արմինե Պետրոսյանի**
Компьютерный дизайн и пагинация – **Армине Петросян**
Computer design and pagination **Armine Petrosyan**

Հրատ. պատվեր N 946
Ստորագրված է տպագրության 25.04.2019 թ.:
Տպագրական 24.5 մամուլ: Տպաքանակը՝ 200:
ՀՀ ԳԱԱ տպարան, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24:
Խմբագրության հասցեն՝ 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24 գ:
Հեռ.՝ 581902:

Подписано к печати 25.04.2019 г.
24.5 печ. л. Тираж – 180. Типография НАН РА,
Ереван, пр. Маршала Баграмяна 24.
Адрес редакции: 0019, Ереван, пр. Маршала Баграмяна 24г
Тел. 581902

Signed for printing 25.04.2019
24.5 print. sheets. Printed copies – 180. NAS RA Press,
Yerevan, Marshal Baghramyan av. 24.
Editorial office address: 0019, Yerevan, Marshal Baghramyan av. 24c
Tel. 581902

Հանդեսի պաշտոնական կայքէջը՝ <http://Iraber.sci.am>
Հանդեսի էլեկտրոնային հասցեն՝ Iraber@sci.am
Официальный сайт журнала: <http://Iraber.sci.am>
Электронная почта журнала: Iraber@sci.am
Official site of the Journal: <http://Iraber.sci.am>
E.mail of the Journal: Iraber@sci.am

ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

ՎՏԱՐԱՆԴԻՈՒԹՅԱՆ ՈՂԲԵՐԳԱԿԱՆ ՓՈՐՁԱՌՈՒԹՅՈՒՆԸ XX ԴԱՐԻ ԻՐԱՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ. ՍԱԴԵՂ ՀԵԴԱՅԱԹ, ՂՈԼԱՄ ՀՈՍԵՅՆ ՍԱԵԴԻ

ՍԱՖՐԱՍՏՅԱՆ Լ.Մ.*

Համաշխարհային գրականությունը և պատմությունը պարունակում են վտարանդիության մասին պատմող ողբերգական, ռոմանտիկ և հերոսական փաստեր, որոնք ջանքեր են՝ հաղթահարելու օտարացման վնասված իրականությունը: Գրող Փ. Թաբրիի «Վտարանդիությունը մարդկության պատժի մի ձև է՝ իր սոցիալական զարգացման բոլոր փուլերում»¹:

Իրանական վտարանդի գրականության պատմությունն ուսումնասիրելիս հարկ է անդրադառնալ այն գրողներին, որոնք ապրել են նույն պատմաշրջանում, ունեցել են իրենց սերնդին հատուկ քաղաքական, սոցիալական, մշակութային և վտարանդիության փորձառությունը, ներսերընդային հարաբերությունները և ձևավորվել են որպես խումբ: Այսպիսով, XX դարասկզբի իրանական գրողների խումբը, որն ապաստան էր գտել Եվրոպայում, մասնավորապես Ֆրանսիայում և Գերմանիայում, հանդես եկավ որպես վտարանդի գրական համայնքի ավագ սերունդ:

Իրանական մտավորական սփյուռքի պատմության մեջ մեծ դերակատարում ունի ֆրանսիական սփյուռքը, որն առավել հայտնի է որպես ուսանողների, վտարանդի մեծանուն գրողների և քաղաքական ընդդիմադիրների համայնք: Առաջին հիշատակումները կապված են 1885-1886 թթ. հետ, երբ Ֆարոխ խան Ղաֆարին, հետագայում՝ Ամին ալ Դոուլեն, ուղարկվում է Փարիզ՝ որպես դեսպանորդ, որի գործունեության տարիներին Դար

* Բանասիրական գիտ. թեկնածու, ԵՊՀ Արևելագիտության ֆակուլտետ, lilit.saf.rastyan@gmail.com, հոդվածի ընդունման օրը՝ 8.04.2019, գրախոսման օրը՝ 16.05.2019:

¹ **Afroughesh Sh., Safari H., Azizi K.** The Poetics of Exile: Travelling in the Land of Intellectual Adventures, - International Journal of Humanities and Management Sciences' (IJHMS), Vol. 1, Issue 1, ISSN 2320-4044, 2013, pp. 1-3.

ույ Ֆոնունի² քառասուներկու պարսիկ շրջանավարտներ, որոնք ստանում են *Les enfants de Perse* (Պարսկաստանի զավակներ) անվանումը, ուսումը շարունակում են Ֆրանսիայում: XIX դարավերջին իրանական համայնքը համալրվում է քաղաքական ընդդիմադիրներով և նորեկ ուսանողներով:

Մեծ իրադարձություն էին պարսիկ և եվրոպացի մտավորականների մշտական հավաքները և դասախոսություններն Իրանի վերաբերյալ, որոնք հիմք են դարձել 1912-1914 թթ. Փարիզում հրատարակելու հայտնի «*Իրան-շահր*» պարբերականը, որը հանդես էր գալիս որպես մտավորական վտարանդիության պաշտոնաթերթ: Չկա ստույգ տեղեկատվություն այն մասին թե՛ արդյո՞ք 1922 թ. Գերմանիայում հրատարակվող հայտնի «*Իրանշահր*» պարբերականը փարիզյան համանուն պարբերականի շարունակությունն էր, թե՞ ոչ:

1978 թ. Փարիզում ժամանակավոր վտարանդիության մեջ էր գտնվում նաև այաթոլլա Խոմեյնին: 1979 թ. Իսլամական հեղափոխությունից հետո զանգվածային արտագաղթի ժամանակ մարդկանց շատ փոքր հատված է ապաստան գտնում Ֆրանսիայում, որոնք մեծապես ներկայացնում էին ավանդական դարձած իրանական վտարանդիության մտավորական և քաղաքական ընդդիմադիր շրջանակները³: Ֆրանսիայում իրանական վտարանդի գրականության ներկայացուցիչներից են մեծանուն արձակագիրներ Սադեղ Հեդայաթը և Ղուլամ Հոսեյն Սաեդին, որոնց կյանքը ունեցավ ողբերգական ավարտ:

Կա միայն մեկ ճշմարիտ, փիլիսոփայական լուրջ խնդիր, և դա ինքնասպանությունն է, - այսպես է խորհում Ալբեր Քամյուն իր «Սիզիփոսի առասպելում»⁴: Փարիզում, 1927 թ. կատարած ինքնասպանության առաջին փորձից քսանչորս երկար ու տառապալից տարիներ անց, ստեղծագործական բուռն դեգերումներից հետո, 1951-ին ընդհատվում է XX դ. մեծանուն մտավորական, թարգմանիչ, իրանական արդիապաշտական գրակա-

² Դար ու Ֆոնունը առաջին բարձրագույն ուսումնական հաստատությունն է Ղաջարական Իրանում, որը հիմնադրվել է 1851 թ. մեծ վեզիր Ամիր Քաբիրի կողմից: Հաստատության առաջին ղեկավարն է եղել Միրզա Քոլի Խան Հեդայաթը՝ Ս. Հեդայաթի նախապապը, իսկ դասախոսների թվում էր հայազգի, իրանական պետական գործիչ դիվանագետ, լուսավորիչ, գրող Միրզա Մելքոմ Խանը:

³ Vida Nassehi - Behnam, FRANCE xvii, Persian Community in France - Encyclopaedia Iranica, Vol. X, Fasc. 2, pp. 184-187.

⁴ Camus A. The Myth of Sisiphus and other essays, New York, 1991, p. 3.

նության հիմնադիր՝ Սադեղ Հեդայատի կյանքը: Գրողի ինքնասպանությունը նրա վերջին արվեստի «գործն» էր:

Հայտնի հեղայաթագետ Հ. Քաթուզիանը նշում է. «Հեդայատը միշտ անկեղծ ու բաց քննադատ էր ...և արմատական մտավորականներից նրա անջատումը վերջինիս վերածեց «virtual e'migre»-ի իր իսկ սեփական երկրում: Այն պակաս դեր չունեցավ 1940-ականներին սկսված ընկճախտի շարունակականության գործում, որը 1951-ին ավարտվեց ինքնասպանությամբ»⁵:

Հեդայատի վտարանդի կյանքի վկայություններն են 1947-1948 թթ. պարսկական նոր արձակի հիմնադիր՝ Մ. Ալի Ջամալզադեին և մտերիմ ընկերոջը՝ Ֆրանսիայում դիվանագիտական առաքելության մեկնած Շահիդ-Նուրայիին գրած նամակները: 1930-ականներին Հեդայատը հույս ուներ հյուրընկալվել Շվեյցարիայում բնակվող Մ. Ջամալզադեին, սակայն մեկնում է Հնդկաստան՝ գրող, իր ընկեր և կենսագիր Շին Փարթուլին հյուր: 1936 թ. Բոմբեյում, Փարսի զրադաշտական համայնքում հայտնի գիտնական Բահրամգր Թահմորազ Անգլեսարիայի մոտ պահլավերեն ուսանելու ընթացքում գրում է պատմվածքներ և 1937 թ. տպագրում իր հայտնի «Քոռ բու» վիպակը՝ հիսուն օրինակով, որի մեծ մասը Ջամալզադեի աջակցությամբ հասցնում է Իրանից դուրս գտնվող իր ընկերներին:

Հեդայատի հնդկաստանյան կյանքի մասին վկայություններ կան գրողի՝ ընկերներին, մասնավորապես՝ Մոջթաբա Մինովիին, Ջամալզադեին և չեխ իրանագետ Ժ. Ռիպկային ուղղած նամակներում: 1925 թ. Եվրոպա մեկնած Հեդայատը հանգրվանում է Փարիզում, որտեղ 1927 թ. կատարում է ինքնասպանության առաջին փորձը՝ նետվելով Մառն գետը, և փրկվում է ձկնորսների ջանքերով: 1930 թ. վերադառնում է Իրան, 1950 թ. դեկտեմբերի 3-ին մեկնում է Փարիզ՝ իր ծանր ու տառապալից դեգերումների վերջին հանգրվանը:

Փարիզյան այցի պատճառը նրա մտերիմ ընկերոջ՝ Ֆրանսիայում իրանական դեսպանատան աշխատակից Շահիդ Նուրայիի հորդորն էր և քաջալերանքը: Եվրոպայում էր նաև գրողի մեկ այլ ընկերն ու գաղափարակիցը՝ Լոնդոնում BBC-ի պարսկական գրասենյակի աշխատակից Մասուդ Ֆարզադը: Փարիզ ժամանելուց առաջ Հեդայատը Շվեյցարիայում

⁵ **Katouzian H.** Sadegh Hedayat: His Work and His Wondrous World, New York: Routledge, 2008, p. 4:

հյուրընկալվում է Ջամալզադեի տանը: Փարիզյան այցի հենց առաջին օրերը նրան պարուրում են անկայունության ու հոռետեսության զգացումով: Շահիդ Նուրային մահացու հիվանդ էր. «Ճակատագրի հեգնանքով և՛ Նուրային, և՛ Հեդայաթը մահանում են գրեթե նույն ժամանակահատվածում, առանց տեղեկանալու միմյանց վախճանի մասին»: Իր ընկերներից մեկին՝ Աբդուլասեմ Էնջավի Շիրագիին ուղղած նամակում Հեդայաթը գրում է. «Ես այստեղ ուրախություն չգտա, մեկուսացել եմ բոլորից, հատկապես իրանցիներից, գումարն էլ վերջանում է, սակայն ինչ հոգ: Ոչ մի գույն այնքան թանձր չէ, որքան սևը»⁶: Փարիզում հեդայաթյան դեգերումների քարտեզագրումը սկսվում է Մոնպառնասի և հաջորդաբար՝ Սուրբ Միքայելի էժան հյուրանոց-կացարաններով: Դեռ վաղ փետրվարին ֆրանսիական ներգաղթյալների ծառայության կողմից տրված երկամսյա կեցության իրավունքը, ինչպես նաև բոլոր սպասումները հասնում են վերջնակետին: Հուսալքված գրողը կարճատև այցով մեկնում է Համբուրգ՝ իր զրադաշտական ընկերոջը տեսակցելու: 1951 թ. մարտի 10-ին եղբորը՝ Մահմուդին գրած հերթական նամակում հայտնում է իր մտահոգությունը. «Այստեղ իրանցիների համար կան բազում խնդիրներ: Մտադիր եմ մեկնել Շվեյցարիա կամ մեկ այլ վայր»⁷: Դեկտեմբերի 22-ին Էնջավիին գրած նամակում նշում է. «Ես նույնիսկ կինոթատրոն, թատրոն կամ սրճարան չեմ հաճախում: Ավելի վաղ եմ պառկում քնելու, քան սովոր էի Թեհրանում»⁸:

Խոչընդոտներն ու ողբերգական իրադարձությունները հաջորդում են միմյանց: Էնջավիի և Ջամալզադեի՝ Հեդայաթի համար Շվեյցարիայի մուտքի արտոնագիր ձեռք բերելու բոլոր ջանքերը պսակվում են անհաջողությամբ: Դրան հաջորդում է ընտանեկան ողբերգությունը: 1951 թ. մարտի 7-ին Թեհրանում սպանվում է քրոջ ամուսինը՝ Իրանի 58-րդ վարչապետ Հաջ Ալի Ռազմարան:

Փարիզում Հեդայաթի միակ ընկերը նրա ողբերգական օրերի ականատեսն ու ուղեկիցն էր երիտասարդ ուսանող Մուսթաֆա Ֆարզանեն, որն ապրիլի 1-ին, գրողին կատարած հերթական այցի ժամանակ, Դենֆեր Ռոշերո փողոցի հյուրանոցային էժանագին սենյակի նախաշեմին դրված

⁶ **Katouzian H.** Sadegh Hedayat: The Life and the Legend of an Iranian Writer, London, New York, 2002, p. 247.

⁷ Նույն տեղում:

⁸ Նույն տեղում, էջ 248:

զամբյուղը գտնում է լցված՝ ճմրթված թղթերով, որոնց մեջ տեղ էին գտել Հեղայաթի մահագուշակ խոհերը. «Ես ինձ հիվանդ եմ զգում, երբ վերցնում եմ գրիչը ձեռքս»⁹:

Հեղայաթի հուսալքված, անտարբեր պահվածքի մասին են խոսում նաև ֆրանսիացի հայտնի իրանագետներ, Հեղայաթի և Ջամալզադեի մտերիմ ընկեր Պիեռ Մենասը և Հենրի Մասեն: Սադեղ Հեղայաթը 1951 թ. ապրիլի 4-ին ինքնասպանություն է գործում Շափիոն 37 հասցեում գտնվող փարիզյան իր վերջին հանգրվանում: Փարիզի մի մզկիթում սակավաթիվ ընկերների և ծանոթների ներկայությամբ և Հ. Մասեի կարճ մահախոսական ճառով հրաժեշտ են տալիս Իրանի մեծ զավակին, հանճարեղ գրողին՝ դեպի հավերժական կյանք: Հեղայաթը թաղված է Պեր Լաշեզ 87-ում, շիրմաքարին դաջված է Քոռ բու հիշեցնող պարսկերեն և ֆրանսերեն գրառում:

Մահվանից առաջ Հեղայաթի գրած խորհրդավոր էսսեներից մեկն է «Կաֆկայի ուղերձը» (1948), պարսիկ գրականագետների դիտարկմամբ՝ եզակի փաստաթուղթ, որը պատկերացում է տալիս ոչ միայն Կաֆկայի հեղայաթյան ըմբռնումների, ընթերցումների ու թարգմանությունների, այլ նաև վերջինիս՝ արդի պարսկական գրականության տեսլականի մասին¹⁰:

Հեղայաթի ինքնասպանության լեզենդը բանավոր ավանդույթի մի մասնիկը չէ, այլ, հակառակը, տարատեսակ տարբերակներ կարելի է գտնել տասնյակ գրքերում, հոդվածներում, հուշերում և հիշատակություններում, որոնք տպագրվել են նրա մահվանից հետո: Դեռևս 1949 թ. Թեհրանում նա կորցրել էր որևէ հետաքրքրություն կյանքի հանդեպ, սակայն ցանկություն չունեի վերջ տալու սեփական կյանքին, քանզի Թեհրանը համարում էր անարժան մի վայր կամ սիրում էր Փարիզը և ցանկություն ուներ թաղվել հենց այդ քաղաքում:

Կար մեկ այլ տարբերակ. Հեղայաթը չէր ցանկանում կյանքն ավարտին հասցնել Իրանում, քանզի չէր ուզում սեփական դիակով աղտոտել արիական հայրենիքը¹¹: 2009 թ. կինոռեժիսորներ Մ. Շահրնազդարի և Ս. Քալանթարի հեղինակությամբ նկարահանվում է գրողի կյանքի վերջին

⁹ Katouzian H. Sadegh Hedayat: The Life and the Legend of an Iranian Writer, p. 252.

¹⁰ Rahimieh N. Hedayat's translation of Kafka and the logic of Iranian modernity (Katouzian H. Sadegh Hedayat: His Work and His Wondrous World, pp. 124-136).

¹¹ Katouzian H. Sadegh Hedayat: The Life and the Legend of an Iranian Writer, pp. 243-244.

օրերը լուսաբանող՝ «No 37-ից» ֆիլմը: Իսկ ահա 2004-ին սփյուռքում բնակվող հայտնի կինովարպետ Ղ. Էբրահիմյանը, որը կինոբեմադրիչ Շ. Նեշաթի բազում ֆիլմերի համահեղինակն է, նկարահանում է «Սուրբ և արքուրդ» կարճամետրաժ ֆիլմը, որը ներկայացվում է Թրիբեկայի կինոփառատոնում, որտեղ հնչում է Գ. Մահլերի «Հինգերորդ սիմֆոնիան»¹²:

Վտարանդիության ու տխուր վախճանի ուղին էր ճակատագիրն ընտրել իրանական գրականության մեկ այլ մեծահամբավ գրող, դրամատուրգ Ղուլամ Հոսեյն Սաեդին: «Վտարանդիությունն ինձ համար վերցրեց բառի ոչ թե *nos* հատվածը, այլ երկրորդ *algia*-ն՝ հեռավորության տենչանք, հեռավորության սեր: Արտիստը սահմանային բնակիչ է, ապրում է իր սեփական լեզվի տանը, իր սեփական ավանդույթների, իր սեփական անցյալի բացարձակ կուրության մեջ: Բոլոր գրողներն են սիրում տարօրինակ հեռավորությունը: Կյանք մահից հետո, լինելով վերջինիս ծայրահեղ ձևը՝ մենք հորինեցինք վերակենդանացումը, քանզի այն հիմնված է բացարձակ մթության վրա»¹³:

Ղուլամ Հոսեյն Սաեդին վտարանդիությունը նույնացնում է պարսկերեն «ավարեզի»՝ շրջմոլիկություն, թափառաշրջիկություն բառի հետ: «Համարյա երկու տարի է, ինչ դարձել եմ փախստական այս վայրում՝ ամեն երկրորդ գիշերն անցկացնելով ընկերներիս տանը: Ոչինչ իրական չի թվում: Փարիզյան շինությունները թատերական զարդարանքների են նմանվում: Ինձ թվում է՝ ես ապրում եմ փոստային նամակի մեջ: Սարսափում եմ երկու բանից՝ քնելուց և արթնանալուց»¹⁴:

1969 թ. Սաեդիի և Դ. Մեհրջուիի համատեղ գլուխգործոցից՝ «Կովը» իրապաշտական կինոկտավից հետո նրանց ստեղծագործական համատեղ միությունը շարունակվում է մինչև Սաեդիի ողբերգական մահը¹⁵: 1981 թ. Թեհրանում տեղի ունեցած արյունոտ ցույցերից հետո «Իրանի գրողների միության» շատ անդամներ, խուսափելով ֆիզիկական կտտանքներից և

¹² 1987 թ. կինոբեմադրիչ Ռաուլ Ռուցը (Չիլի) նկարահանում է *La Chouatte aveugle* ֆիլմը՝ Հեդայաթի «Քոռ Քու» վիպակի հիման վրա, իսկ 2005 թ. Խ. Սինային՝ Հեդայաթի մասին պատմող «Երկխոսություն սովերի հետ» փաստագրական ֆիլմը:

¹³ **Baraheni R.** *Exilic Blindness: The Unwritten Autobiography of a Dramatist in Paris Posthumously Dictated to a Friend (Modern Drama, Volume 46, Number 1, Spring 2003, p. 114-115).*

¹⁴ **Naficy H.** *The Making of Exile Cultures: Iranian Television in Los Angeles*, 1993, p. 11.

¹⁵ **Dabashi H.** *Corpus Anarchicum: Political Protest, Suicidal Violence and the Making of Posthuman Body*, London, 2012, EBook (PDF), p. 167.

աքսորից, լքում են երկիրը: Միության անդամները՝ պարտված և ուժասպառ, հարկադրված էին ընտրություն կատարել վտարանդիության-տանարտագաղթի, ֆիզիկական կամ զգայական անտնության միջև: Միության անդամների վերջին հայտարարությունը՝ «Ռեպրեսիա, բռնապետություն, խեղդամահություն» խորագրով, լույս է տեսնում հուլիսին, «Բուստան» պարբերականում:

1981 թ. Սաեդին ապաստան է գտնում Փարիզում, 1982 թ. վերականգնվում է «Իրանի գրողների միությունը վտարանդիության մեջ» կառույցը և վերականգնում «Ալեֆբե» պարբերականի հրատարակությունը, ինչպես նաև հիմնում է «Իրանի թատերական միությունը»: 1983 թ. հրատարակում է «Փարիզյան եռագրություն» ժողովածուն:

Գրողի՝ վտարանդի տարիների արձակը տանջահար ու անկենդան է, երբեմն նույնիսկ կցկտուր, ոչ նման նրա նախկին տարիների պերճախոս ոճին: 1986 թ. գրում է «Օթելլոն հրաշքների երկրում և հայելի հղկող պատմասացները» երգիծական-ողբերգական պիեսը՝ ցույց տալով Շեքսպիրի իսլամացումը Իրանում: Պիեսը թարգմանվում է Մ. Ֆիլիպսի կողմից և բեմականացվում Օհայոյի համալսարանում: Վտարանդիության տարիներին են ծնվում նաև մի շարք ֆիլմերի սցենարներ, այդ թվում՝ «Մուլուս Քորփուսը» իր սիրելի կինովարպետ Դ. Մեհրջուլիի ֆիլմի համար¹⁶:

2005-ին «Ավատարը վտարանդիության մեջ» էսսեում Սաեդին գրում է. «Վտարանդիները պետք է բարձրաձայնեն աշխարհին, բոլոր լեզուներով, թե ինչ է տեղի ունեցել իրենց երկրում: Նրանք պետք է պատմեն յուրաքանչյուրին: Նրանք պետք է պատմեն այն սև կտորի մասին, որով մի քանի դահիճներ ծածկում են աշխարհը՝ խեղդելով մարդկանց: Կապանքները պետք է հեռացվեն շրթունքներից: Եկել է բղավելու պահը: Եթե դուք չբղավեք, եթե չթափահարեք աշխարհին, այն հայացք չի նետի ձեզ վրա: Աստիճանական մահը, տևական մահը ձեզ դանդաղ կհափշտակի, ինչպես փտախտը»¹⁷:

¹⁶ Farrokh F., Yavari H. Sa'edi, Gholam - Hosayn.- Encyclopedia Iranica, December 6, 2012 (www.iranicaonline.org/articles/saedi-gholam-hosayn).

¹⁷ Saedi Gh. H. Avatars in Exile, trans Pakravan S.,- Chanteh, Spring: 35, 1993.

«Բոլոր գրողներն օտարներ են՝ ուր էլ որ լինեն, տանը, թե դրսում»¹⁸: Այնուհետև Սաեդին հավելում է. «Երբ առաջին անգամ ժամանեցի Փարիզ, հյուրընկալվեցի ընդդիմադիրների տանը, գիտնականները թարգմանեցին իմ աշխատանքները: Երկու հազար էջ ուղարկվեց ամերիկյան գլխավոր պարբերականներին: Նրանք բոլորը միաբերան մերժեցին: Անհասկանալի են գործերը, և պահանջում են ծանր վերախմբագրում՝ պատճառաբանումով»¹⁹:

Գրողի դիտարկմամբ՝ «Դեռ համակրանք կա Արևմուտքի հանդեպ, այն գրողների հանդեպ, որոնք ենթարկվել են կոտանքների կամ ազատագրված, սակայն ոչ ոք չի կռահում, որ այդ տառապանքների պատճառը գրքերն են, որոնք կմնան չիրատարակված կամ, եթե հրատարակվեն, նրանց գինը կլինեն կոտանքները, դատավճռի ահը, և վերջապես, ինչպես նշում է իմ կենսագիրը՝ կոտրված հոգին»: Իսկ վտարանդիության իր ողիսականի վերջին բաբախյունների մասին այսպես է գրում տանջահար գրողը. «Ես իմ ժամանակն անցկացնում էի խմելով: Ամիս առ ամիս կույր էի ձևանում... Հանկարծ ես այլևս կույր չէի ձևանում: Ես կույր էի: Ես կարիք ունեի մարդկանց, որոնք փողոցում կուղեկցեին ինձ: Նստած էի տանը՝ սպասելով մահվան: Հայրենաբաղձությունը այլ կողմում էր: Կուրացած հուշերն ամենուրեք են: Կար միայն մի ելք. խմել, խմել՝ երևոյթները բառերի վերածելու մտածումով»²⁰:

Գրականագետ Ռ. Բարահենին Սաեդին նվիրված՝ «Վտարանդիական կուրություն: Փարիզում դրամատուրգի չգրված ինքնակենսագրություն՝ հետմահու նվիրված ընկերոջս» հոդվածում մտորում է. «Ես մահացա Փարիզում 1985 թ.: Այստեղ եմ, Պեր Լաշեզում, ճիշտ տասնմեկ շիրիմ Մարսել Պրուստից այն կողմ, որից ոչինչ չեմ ընթերցել, և հեռու Ս. Հեդայաթից: Հեդայաթը հեռացավ իր երկրից՝ սպանելու համար իրեն մեկ այլ երկրում: *No nos, no algia: Swanավարտը: Վտարանդիության ավարտն է*»²¹:

Հոդվածի վերջում Ռ. Բարահենին հիշատակում է այն գրողներին, որոնք իրենց մահկանացուն կնքեցին վտարանդիության մեջ. Սեյդ Մոհա-

¹⁸ **Baraheni R.** Exilic Blindness: The Unwritten Autobiography of a Dramatist in Paris Posthumously Dictated to a Friend, p. 115.

¹⁹ Նույն տեղում, էջ 117:

²⁰ Նույն տեղում:

²¹ Նույն տեղում, էջ 118:

մադ Ալի Ջամալզադե (1892, Սպահան - 1997, Ժնև)՝ 81 տարի վտարանդիության մեջ, Բոզորգ Ալավի (1904, Թեհրան - 1997, Բեռլին)՝ 50 տարի, Սադեդ Չուբաք (1916, Բուշեհր - 1998, Բրքլի)՝ 22 տարի, Թադի Մոդարեսի (1933, Թեհրան - 1997, Բալթիմոր)՝ 40 տարի²²:

Ղոլամ Հոսեյն Սաեդիի վտարանդիության դառը կենսափորձի ամփոփումն է «Վտարանդիության ազատությունը և վերածնաւորումը» էսսեի հետևյալ մտորումը. «Վտարանդին, եթե նույնիսկ կենդանի է, մեռած է»²³:

Վտարանդիության ծանր հոգեվիճակի մասին է հիշատակում Իսլամական հեղափոխությունից հետո Փարիզում ապաստան գտած արձակագիր, գրականագետ, թարգմանիչ Մահշիդ Ամիրշահին: «Տանը» վեպի նախաբանում Ամիրշահին գրում է. «Երբեմն օրերով տնից դուրս չէի գալիս, երբեմն գիշերներ շարունակ չէի վերադառնում տուն: Երբեմն զգում էի միայնակ ուրիշների մեջ, երբեմն, երբ միայնակ էի, երազում էի ամբոխի մասին: Երբեմն ցանկանում էի մոռանալ ամեն ինչ, երբեմն չէի ցանկանում ոչինչ կորցնել իմ հուշերից»²⁴:

Վտարանդիության դառը փորձառության մասին մեկ այլ հայտնի գրող՝ Գոլի Թարադին իր պատմվածքի («Առաջին օրը») անգլերեն թարգմանված տարբերակում գրում է. «Իրանը քեզի 1979 թ., Իսլամական հեղափոխության նախաշեմին, և երկու զավակներիս հետ ապաստանեցի Փարիզում: Բավական մանկամիտ էի՝ մտածելով, որ այս սկզբի քառասյին իրարանցումը կվերադառնա բնականոն կյանք, և ես կկարողանամ վերադառնալ: Մեկ տարի անց ես հոսպիտալացվեցի հոգեբուժական հիվանդանոց: Դեղահաբերը վերականգնեցին իմ մտավոր կայունությունը և օգնեցին հաղթահարել այդ սարսափելի ընկճախտը: Սակայն այն, ինչ եկավ ինձ պահպանելու և դուրս բերելու ընկճախտի մութ ճիրաններից, գրականության մոգական ուժն էր»²⁵:

²² **Baraheni R.** Exilic Blindness: The Unwritten Autobiography of a Dramatist in Paris Posthumously Dictated to a Friend, p. 118.

²³ **Darvishpour M.** The New Nest and Horizons of Exile: A Sociology of Diaspora Literature (Gozaar: A Forum on Human Rights and Democracy of Iran, 01, February, 2008).

²⁴ **Naficy H.** The Making of Exile Cultures: Iranian Television in Los Angeles, 1993, pp. 11-12.

²⁵ **Taraghi G.** The First Day, Author's Note. - Words Without Borders, August 2008, <http://www.wordswithoutborders.org/article/the-first-day>.

Այսօր էլ պարսիկ գրականագետների ուսումնասիրությունների ծիրում են այն քաղաքական, սոցիալական, հոգեբանական դրդապատճառները, որոնք հարկադրում են ստեղծագործող անհատին ընտրել վտարանդիության դառը ճանապարհը: Հայրենիքից հեռու ստեղծագործող գրողների մասին այսպես է մտորում գրականագետ Փ. Քարիմը. «Իրանցի գրողները այսուհետև ոչ միայն իրանական կամ վտարանդի գրողներ են, այլև «աշխարհի գրողներ»²⁶:

Ամփոփելով նյութը՝ նշենք, որ Իսլամական հեղափոխությունից հետո սկսված՝ գրողների մեծ արտագաղթը, մեծացնելով վտարանդիության աշխարհագրության ֆիզիկական սահմանները, անխախտ պահեց նրանց՝ միայնության, հուսալքության, տուն, հայրենիք և վերադարձ չունենալու համամարդկային զգացումները:

**ՎՏԱՐԱՆԴԻՈՒԹՅԱՆ ՈՂԲԵՐԳԱԿԱՆ
ՓՈՐՁԱՌՈՒԹՅՈՒՆԸ XX ԴԱՐԻ ԻՐԱՆԱԿԱՆ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ. ՍԱԴԵՂ ՀԵԴԱՅԱԹ, ՂՈԼԱՄ
ՀՈՍԵՅՆ ՍԱԵԴԻ**

ՍԱՖՐԱՍՏՅԱՆ Լ.Մ.

Ամփոփում

Իրանական մտավորական սփյուռքի պատմության մեջ մեծ դերակատարում ունի ֆրանսիական սփյուռքը, որն առավել հայտնի է որպես ուսանողների, վտարանդի մեծանուն գրողների և քաղաքական ընդդիմադիրների համայնք: Ֆրանսիայում իրանական վտարանդի գրականության ներկայացուցիչներից են մեծանուն արձակագիրներ Սադեղ Հեդայաթը և Ղոլամ Հոսեյն Սաեդին, որոնց կյանքը օտարության մեջ ունեցավ ողբերգական ավարտ: Հայրենիքի հանդեպ տաճած մեծ սերը Հեդայաթի հետ էր մինչև մահը: Փարիզում գտնվելու տարիներին նա ապրում է խորը հուսալքություն և դիմում է ինքնասպանության: Հեդայաթի ամենահայտնի ստեղծագործությունը՝ «Քոռ բուն», գրվել է Հնդկաստանում, նույն-

²⁶ Karim P. Writing Beyond Iran: Reinvention and the Exilic Iranian Writer, - World Literature Today, Vol. 89, No. 2, March 2015, p. 35.

պես օտարության մեջ: Վտարանդիության մեջ ապրելու ցավը, հուսալքությունն ու կարոտը նաև Հեղայաթի հայրենակից, մեծ գրող և դրամատուրգ Ղուամ Հոսեյն Սաեդիին մղում են վերջ տալու կյանքին: Վտարանդիության տարիներին են գրվում Սաեդիի շատ հայտնի ստեղծագործություններ:

Բանալի բառեր՝ Իրան, վտարանդիություն, արձակագիր, Ֆրանսիա, Իսլամական հեղափոխություն, օտարացում, մահ:

ТРАГИЧЕСКИЙ ОПЫТ ИЗГНАНИЯ В ИРАНСКОЙ ЛИТЕРАТУРЕ XX ВЕКА: САДЕГ ХЕДАЯТ, ГОЛАМ ХОССЕЙН САЕДИ

САФРАСТЯН Л.М.

Резюме

Иранская колония в Париже, состоящая большей частью из студентов, писателей и политических оппозиционеров, сыграла значимую роль в истории иранской интеллектуальной диаспоры. Ее наиболее известными представителями были писатели-эмигранты Садег Хедаят и Голам Хоссейн Саеди, жизнь которых окончилась трагически.

С. Хедаят до последнего дня своей жизни был исполнен патриотических чувств. Чувство безнадежности, охватившее его в эмиграции, явилось причиной самоубийства. Получившее наибольшую известность произведение Хедаята “Слепая сова” также было написано в эмиграции – в Индии.

Многие произведения представителя современной иранской прозы и драматургии Голама Хоссейна, снискавшие ему мировую известность, также были созданы в годы парижской эмиграции. Глубокая ностальгия по Родине привела к его трагической гибели.

Ключевые слова – Иран, изгнание, Исламская революция, Франция, прозаики, отчуждение, смерть.

TRAGIC EXPERIENCE OF EXILE IN THE 20TH CENTURY IRANIAN LITERATURE. SADEGH HEDAYAT, GHOLAM HOSSEYN SA'EDI

L. SAFRASTYAN

Abstract

The Iranian Diaspora of France best known as a community of students, famous immigrant writers and political oppositionists played a great role in the history of Iranian intellectual Diaspora. The most outstanding representatives of the immigrant Iranian writers Sadegh Hedayat and Gholam Hosseyn Sa'edi ended their lives in the strange land tragically. Great love for homeland was with Hedayat to his last day. The sense of hopelessness gripping the immigrant writer in the years he spent in Paris led to the suicide. The best known book of Hedayat – "The Blind Owl" was written also in immigration – when he was in India. The pain of living in exile, hopelessness and home – sickness engulfing Hedayat's compatriot a great prosaic and play writer Gholam Hoseyn Sa'edi also led him to end his life. Many of Sa'edi's famous writings were written in the years of immigration.

Key words – Iran, exile, France, Islamic revolution, fiction writers, alienation, death.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Սարգսյան Ա.Թ. – Վերակազմյալ հնչակյան կուսակցության «Հայկաշեն» պաշտոնաթերթը.....	12
Վարդանյան Ա.Մ. – Քաղաքական իշխանության համար պայքարը Հայաստանում Մամիկոնյանների և Բագրատունիների միջև VIII դ. առաջին կեսին.....	31
Սուքիասյան Ռ.Ա. – Նուբարյան գրադարանի թղթապանակը Սեբաստիայի կոտորածների ու տեղահանությունների վերաբերյալ....	46
Մարության Ա.Ց., Շարաֆյան Ն.Գ. – Դարձուրի սևամորթ բնակչության ցեղասպանության պատճառներն ու շարժառիթները.....	59
Պետոյան Ս.Հ. – Կովկասի հայոց բարեգործական ընկերության Շուշիի մասնաճյուղի գրադարան-ընթերցարանը (1889-1900 թթ.).....	68
Բաղդասարյան Ս.Ա. – Հայ-բուլղարական տնտեսական փոխգործակցությունը 1998-2008 թթ.	83
Պողոսյան Ա.Տ. – Քեշիկը Կովկասում.....	89
Ռուսկյան Լ.Մ. – Պոլիարխիան և նորագատականության ժամանակակից դրսևորումները.....	99
Հովսեփյան Մ.Հ. – Սիրիահայ համայնքը և սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեն 1964-1985 թթ.	110

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Սուվարյան Յու. Մ., Սարգսյան Վ.Ա. – Հանրային կառավարման արդյունավետության գնահատման մեթոդաբանությունը.....	128
Ոսկանյան Վ.Ս., Մանուկյան Ա.Ա. – Ծխելու արգելքը աշխատավայրում. սոցիալ-տնտեսական վերլուծություն.....	150
Ավետիսյան Գ.Ս. – Անբարեխիղճ մրցակցության պետական կարգավորման հիմնախնդիրները.....	161
Գասպարյան Ռ.Լ. – ՀՀ բանկային համակարգի կայունությունը.....	172

ՓԻԼԻՍՈՓԱՅԻՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔ

Սաֆարյան Գ.Գ., Թավադյան Ա.Լ. – Պետության և իրավունքի տիպաբանության ժամանակակից պատկերացումները. տեսական-իրավական վերլուծություն.....	181
---	-----

Հարությունյան Ա.Ա. – Իրավագիտակցությունը իրավաստեղծման և իրավաիրացման համատեքստում.....	190
--	-----

ՍՈՑԻՈԼՈԳԻԱ

Գալստյան Մ.Վ. – Միգրանտների հուղարկավորումը Հայաստանում. սգի ինքնության և կառուցակցման հարցեր.....	199
Կարապետյան Ռ.Ս. – Հայ-բելառուսական էթնոմշակութային միջնորդավորված կապերի շուրջ.....	211

ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Սաֆրաստյան Լ.Մ. – Վտարանդիության ողբերգական փորձառությունը XX դարի իրանական գրականության մեջ. Սադեղ Հեդայաթ, Ղուլամ Հոսեյն Սաեդի.....	225
Հարությունյան Լ.Ա. – Պատճառահետևանքային կապերի արտահայտումը գործարար նորություններում.....	237
Գլշյան Ա.Մ. – Հակոբ Պարոնյանը և իր ժամանակը.....	248

ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԱՐՎԵՍՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Սահակյան Լ.Զ. – Գողթան երգիչներ. Կոմիտաս վարդապետն ու Արամ Խաչատրյանը.....	264
Խաչմանյան Ս.Հ. (ԱՄՆ, Լոս Անջելես) – Կաթողիկոսական թագ-խոյրի խորհրդարանությունը.....	275

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Քոչարյան Գ.Գ. – Դվինի կենտրոնական թաղամասի անտիկ շերտի բնութագիրը.....	293
Կունտներ Վ.Ա. (Ավստրիա, Ինսբրուկ), Հայնշ Ս.Ա. (Ավստրիա, Ինսբրուկ), Ավետիսյան Հ.Գ. (ՀՀ, Երևան) – Արամուսի արևմտյան ու կենտրոնական ամրոցներում իրականացված պեղումների նախնական արդյունքների և հետազոտման համատեքստի շուրջ (2009-2015 թթ.).....	304
Վարդանյան Բ.Վ. – Անվավոր փոխադրամիջոցներով ուշ բրոնզեդարյան թաղումների սոցիալ-ժողովրդագրական հետազոտության խնդիրները Կուրարաքսյան Միջագետքում.....	332

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

Մահտեսյան Հ.Շ. – Ստեփան Կամսարականի կազմած՝ Անդրկովկասի վարչատարածքային բաժանման ծրագիրը (1917թ.).....	350
---	-----

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մկրտչյան Ս.Ս. – Միհրան Գալստյան, Ռուբեն Օհանջանյան, Թամար Զաքարյան, Գայանե Հակոբյան, Արդի հայ ընտանիքը փոխակերպվող հասարակությունում	361
Թադևոսյան Ա.Զ. – Ռաֆիկ Նահապետյան, Հունական և հռոմեական անտիկ սկզբնաղբյուրների ազգագրական տեղեկությունները Հայաստանի և հայերի մասին.....	367
Կարապետյան Ա.Հ. – Արարատ Հակոբյան, 1937 թվականը Հայաստանում.....	370
Խաչատրյան Ա.Ս. – Նարինե Աբգարյան, Երկնքից երեք խնձոր ընկավ...	374

ՄԵՐ ՀՈՐԵԼՅԱՐՆԵՐԸ

Բաղդասարյան Ռ.Ա. – Հովհաննես Թումանյանը և ռուս գրականությունը (բանաստեղծի ծննդյան 150-ամյակին).....	378
--	-----

ԽՈՍՔ ՀԻՇԱՏԱԿԻ

Վարդանյան Ն.Խ. – Հայագիտության մեծ նվիրյալը. Սարգիս Հարությունյան.....	384
---	-----

СОДЕРЖАНИЕ

ИСТОРИЯ И ПОЛИТОЛОГИЯ

Саргсян С.Т. – "Айкашен" - газета-официоз реорганизованной партии Гнчакян.....	12
Варданян А.М. – Борьба за политическую власть в Армении в первой половине VIII века между нахарарскими домами Мамиконянов и Багратуни.....	31
Сукиасян Р.А. – Досье библиотеки Нубарян о резне и депортации в Себасти.....	46
Марукян А.Ц., Шарафян Н.Г. – Причины и мотивы геноцида африканского населения Дарфура.....	59
Петоян С.А. – Библиотека-читальня шушинского филиала Кавказско-армянского благотворительного общества (1889-1900 гг.).....	68
Багдасарян С.А. – Армяно-болгарское экономическое сотрудничество в 1998-2008 гг.	83
Погосян А.Т. – Кэшик на Кавказе.....	89
Рухкян Л.М. – Полиархия и современные проявления неолиберализма... ..	99
Овсепян М.О. – Армянская община Сирии и комитет по культурным связям с армянами диаспоры в 1964-1985 гг.	110

ЭКОНОМИКА

Суварян Ю.М., Саркисян В.А. – Методология оценки эффективности общественного управления.....	128
Восканян В.С., Манукян А.А. – Запрет курения на рабочем месте: социально-экономический анализ.....	150
Аветисян Г.С. – Проблемы государственного регулирования недобросовестной конкуренции.....	161
Гаспарян Р.Л. – Стабильность банковской системы РА.....	172

ФИЛОСОФИЯ И ПРАВО

Сафарян Г.Г., Тавадян А.Л. – Современные представления государственной-правовой типологии: теоретико-правовой анализ..	181
Арутюнян А.А. – Правосознание в контексте правотворчества и правоприменения.....	190

СОЦИОЛОГИЯ

- Галстян М.В.** – Погребение мигрантов в Армении: вопросы самобытности и конструктивизма траура..... 199
- Карпетян Р.С.** – О опосредованных армяно-беларусских этнокультурных связях..... 211

ФИЛОЛОГИЯ

- Сафрастян Л.М.** – Трагический опыт изгнания в иранской литературе XX века: Садег Хедаят, Голам Хоссейн Саеди..... 225
- Арутюнян Л.А.** – Отражение причинно-следственных отношений в бизнес-новостях..... 237
- Глджян А.М.** – Акоп Паронян и его время..... 248

КУЛЬТУРА И ИСКУССТВОВЕДЕНИЕ

- Саакян Л.З.** – Певцы Гохтана: Комитас Вардапет (Архимандрит) и Арам Хачатурян..... 264
- Хачманян С.Г. (США, Лос-Анджелес)** –Символика митры ☒ короны католикоса..... 275

АРХЕОЛОГИЯ И ЭТНОГРАФИЯ

- Кочарян Г.Г.** – Характеристика античного слоя центрального квартала Двина..... 293
- Кунтнер В.А. (Австрия, Инсбрук), Гайнш С.А. (Австрия, Инсбрук), Аветисян Г.Г. (РА, Ереван)** – О контексте исследований и предварительных результатах раскопок, проведенных в западном и центральном крепостях Арамуса (2009-2015 гг.)..... 304
- Варданян Б.В.** – Вопросы социально-демографического исследования позднебронзовых колесничных погребений в Куро-араксском междуречье..... 332

ПУБЛИКАЦИИ

- Майтесян Г.Ш.** – Проект административно-территориального деления Закавказья, составленный Степаном Камсараканом (1917 г.)..... 350

РЕЦЕНЗИИ

Мкртчян С.С. – <i>Мигран Галстян, Рубен Оганджян, Тамар Закарян, Гаянэ Акоян, Современная армянская семья в трансформирующемся обществе</i>	361
Тадевосян А.З. – <i>Рафик Нахапетян, Этнографические данные греко-римских античных первоисточников об Армении и армянах</i>	367
Карпетян А.А. – <i>Арарат Акоян, 1937 год в Армении</i>	370
Хачатрян А.С. – <i>Нарине Абгарян, С неба упали три яблока</i>	374

НАШИ ЮБИЛЯРЫ

Багдасарян Р.А. – <i>Ованес Туманян и русская литература (к 150-летию со дня рождения поэта)</i>	378
---	-----

СЛОВО ПАМЯТИ

Варданян Н.Х. – <i>Заслуженный арменовед: Саркис Арутюнян</i>	384
--	-----

CONTENTS

HISTORY AND POLITICAL SCIENCE

S. Sargsyan – “Haykashen” – The Official Newspaper of the Reorganized Hunchag Party.....	12
A. Vardanyan – Struggle between Mamikonyan and Bagratuni Noble Families for Political Power in Armenia in the First half of the VIII Century..	31
R. Sukiasyan – The Dossier of Nubarian Library on the Massacres and Deportation of Sebastia.....	46
A. Marukyan, N. Sharafyan – The Causes and Motives of the Genocide of Black Africans in Darfur.....	59
S. Petoyan – The Reading Hall of Shushi Branch of the Caucasus Armenians’ Benevolent Society (1889-1900).....	68
S. Baghdasaryan – Armenian-Bulgarian Economic Cooperation in 1998-2008.....	83
A. Poghosyan – <i>Keshig</i> in Caucasus.....	89
L. Rukhkyan – Polyarchy and Modern Manifestations of Neoliberalism.....	99
M. Hovsepyan – Armenian Community of Syria and the Committee on Cultural Relations with Armenians of the Diaspora in 1964-1985.....	110

ECONOMY

Yu. Suvaryan, V. Sargsyan – Methodology of Public Administration Effectiveness Assessment.....	128
V. Voskanyan, A. Manukyan – Smoking Ban in the Office. Socio-Economics Analysis.....	150
G. Avetisyan – Issues of State Regulation of Unfair Competition.....	161
R. Gasparyan – Stability in RA Banking System.....	172

PHILOSOPHY AND LAW

G. Safaryan, A. Tavadyan – Modern Standards of State-Legal Typology: A Theoretical and Legal Analysis.....	181
A. Harutyunyan – Legal Awareness in Context of Lawmaking and Law-Realization	190

SOCIOLOGY

- M. Galstyan** – Migrant’s Funeral in Armenia: Issues of Identity and Mourning Construction..... 199
- R. Karapetyan** – On Armenian-Belarussian Ethnic-Cultural Intercourse.... 211

PHILOLOGY

- L. Safrastyan** – Tragic Experience of Exile in the 20th Century Iranian Literature. Sadegh Hedayat, Gholam Hosseyn Sa’edi..... 225
- L. Harutyunyan** – Expression of Causative and Resultative Relations in Business News..... 237
- A. Gldjyan** – Hakob Paronyan and His Time..... 248

CULTURE AND ART HISTORY

- L. Sahakyan** – Singers of Goghtn: Komitas Vardapet (Archimandrite) and Aram Khachaturian..... 264
- S. Khachmanyán (USA, Los Angeles)** – The Symbology of the Miter-Crown of the Catholicos 275

ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

- G. Kocharyan** – The Antique Layer of Central District of Dvin..... 293
- W. Kuntner (Austria, Innsbruck), S. Heinsch (Austria, Innsbruck), H. Avetisyan (RA, Yerevan)** – Some Remarks on the Research Context and the Preliminary Results of the Excavations Conducted in the West and Central Forts of Aramus between 2009 and 2015..... 304
- B. Vardanyan** – The Problems of Social-Demographical Research of Chariot-Burials in the South Caucasus during the Late Bronze Age... 332

PUBLICATIONS

- H. Mahtesyan** – The Project of Stepan Kamsarakan on Administrative and Territorial Division of Transcaucasia (1917)..... 350

LITERARY REVIEWS

S. Mkrtchyan – <i>Mihran Galstyan, Ruben Ohanjanyan, Tamar Zakaryan, Gayane Hakobyan, Modern Armenian Family in Transformative Society</i>	361
A. Tadevosyan – <i>Rafik Nahapetyan, Ethnographic Data of Ancient Greek and Roman Sources on Armenia and Armenians</i>	367
A. Karapetyan – <i>Ararat Hakobyan, The Year of 1937 in Armenia</i>	370
A. Khachatryan – <i>Narine Abgaryan, Three Apples fall from the Sky</i>	374

OUR JUBILEES

R. Baghdasaryan – <i>Hovhannes Tumanyan and Russian Literature (Towards the 150th Anniversary of the Poet)</i>	378
--	-----

WORD OF MEMORY

N. Vardanyan – <i>The Great Devotee of Armenology: Sargis Harutyunyan</i> ..	384
---	-----